ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի ԵՎ 10-Ի՝ ՀԵՌԱԿԱՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **«10» օգոստոսի 2022թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 14-րդ, 18-րդ և 19-րդ կետերը, և Խորհրդի նախագահի 2022 թվականի օգոստոսի 5-ի N3-Լ որոշումը՝ տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2022 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 09$^{00}$-ին և ավարտվեց 2022 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 16$^{00}$-ին:

Քվեարկությանը մասնակցեցին՝

**Խորհրդի նախագահ՝**

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

**Խորհրդի անդամներ՝**

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մ. Թադևոսյան - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան -«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի բյուջեով նախատեսված, սակայն չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղելու մասին Խորհրդի որոշման նախագիծը հաստատելու մասին:

2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծի ներկայացում:

3. ՀՀ կրթության տեսչական մարմնի պաշտոնների անվանացանկում և պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

4. ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի օգնականի հաստիքը կրճատելու մասին:

5. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում տեխնիկական բնույթի վրիպակների ուղղումներ (6-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին սյունակում «4-րդ» թիվը փոխարինել «6-րդ» թվով, 19-րդ կետի 4-րդ սյունակից հանել «ՌԳՍՊՎԳՎ» բառը) կատարելու մասին:

Օրակարգային հարցերի քվեարկությանն անհրաժեշտ նյութերն ուղարկվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացավ:

**Քվեարկության արդյունքում՝**

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
2. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
3. Ռ. Գևորգյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
4. Ա. Սարգսյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
5. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
6. Մ. Թադևոսյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
7. Բ. Փափազյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
8. Ա. Բախշյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
9. Ա. Հակոբյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկեց «կողմ»:

**Քվեարկության արդյունքները՝**

**Հարց 1-ին՝ 9 «կողմ»:**
**Հարց 2-րդ՝ 9 «կողմ»:**
**Հարց 3-րդ՝ 9 «կողմ»:**
**Հարց 4-րդ՝ 9 «կողմ»:**
**Հարց 5-րդ՝ 9 «կողմ»:**

**Այսպիսով, տեսչական մարմնի խորհրդի հեռակա նիստին մասնակցած 9 անդամներից 9-ը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեցին «կողմ»:**

Ա. Բախշյանը էլեկտրոնային նամակով ներկայացրեց տեսչական մարմի 2022 թվականի տարկան ծրագրի վերաբերյալ հարցեր, որին տեսչական մարմնի ղեկավարին փոխարինող Ռ. Գալստյանը և ղեկավարի տեղակալ Ն. Հովհաննիսյանը պատասխանեցին էլեկտրոնային նամակով:

**Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.**

Հարց 1. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի բյուջեում չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղելը:

Հարց 2. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծին:

Հարց 3. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի անվանացանկում և պաշտոնների անձնագրերում առաջարկվող փոփոխություններին և լրացումներին:

Հարց 4. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի օգնականի հաստիքի կրճատմանը:

Հարց 5. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում տեխնիկական բնույթի վրիպակների ուղղումների կատարումը (6-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին սյունակում «4-րդ» թիվը փոխարինել «6-րդ» թվով, 19-րդ կետի 4-րդ սյունակից հանել «ՌԳՍՊՎԳՎ» բառը):

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Խորհրդի նախագահ՝** _____ **Վ. Դումանյան**

ստորագրություն

**Խորհրդի քարտուղար՝** _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն